— Ես ուզում եմ աւելի լաւ ճանաչել նրանց, քեռի, պատմեցէք, թէ ինչ-պէ՞ս ընկաւ Մելիք-Միսաքը իր փառքից եւ ի՞նչ առիթ տուեց նրան հասարակ որսորդի կերպարանքով յայտնուել Պարսկաստանում:

— Դա մի երկար պատմութիւն է, որի մանրամասնութիւններն ինձ եւս յայտնի չեն, — ասաց նա: — Միայն այսքանը գիտեմ, որ Մոգաց եւ Սասնոյ երկրներում մի քանի ուրիշ հայ իշխաններ եւ մի քանի տանուտէրներ հակառակ կուսակցութիւն էին կազմում Մելիքի դէմ: Նրանք միացան տեղային հայոց առաջնորդի հետ, եւ մի քանի վարդապետներ էլ իրանց կողմը գցելով, գրգռեցին ժողովուրդը Մելիքի դէմ: Նրանք ասում էին, թէ մենք չենք ուզում, որ մեզ վրայ «հայ» տիրէ, մեզ համար լաւ է քուրդը, «Հայից բէկ (իշխան) լինել չէ կարող»:

Այնուհետեւ քեռի Պետրոսը խիստ արհամարհական կերպով նկարագրեց Մելիքի անկումը: Ես նրա խօսքերից միայն այսքանը կը յիշեմ:

Ամեդիայի մէջ այն ժամանակ նստում էր մի քուրդ իշխան. նա մի քանի ցեղերի գլխաւորն էր եւ ունէր իր ձեռքի տակ բազմաթիւ պատերազմող տղամարդիկ: Քուրդ իշխանը Մելիքի ոխերիմ թշնամիներից մէկն էր: Հայոց առաջնորդը մի քանի տանուտէրերի հետ ծածուկ գնում են նրա մօտ, յայտնում են, թէ որպէս իրանք, նոյնպէս եւ ժողովրդի մեծ մասը Մելիքից գոհ չեն, եւ ցանկանում են նրա լուծը իրանց վզից գցել: Այս պատճառով հրաւիրում են քուրդ իշխանին յանձն առնել իրանց վրայ տիրապետելը: Եւ առաջնորդը իր տանուտէրների հետ խոստանում են, որ ամէն կերպով կօգնեն եւ ձեռնտու կը լինեն քուրդ իշխանին Սասունը եւ Մոգաց երկիրը տիրելու գործի մէջ:

Ես կտրեցի քեռի Պետրոսի խօսքը՝ հարցնելով.

— Առաջնորդը ի՞նչ մի առանձին օգուտ ունէր հայ ժողովուրդը քուրդ իշխանի ձեռքում մատնելու մէջ:

— Շատ օգուտ, — պատասխանեց նա. — եթէ Մելիքը մէջտեղից վերցուէր, միայն առաջնորդը կը մնար որպէս ժողովրդի հոգեւոր եւ մարմնաւոր ներկայացուցիչը: Բայց Մելիքի ստորերի տակ նա ուրիշ ոչինչ չէր, եթէ ոչ մի բարձր հոգեւորական:

Այս յետոյ, խիստ յետոյ ես հասկացայ հայոց հոգեւորականութեան մշտական կռիւը մարմնաւոր իշխանութեան դէմ: Այս այն ժամանակ հասկացայ, երբ կարդացի մեր ազգի պատմութիւնը եւ ծանօթացայ նրա թշուառ անցեալի հետ...: